

ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՁԱՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

16 ՆՈՅԵՄԲԵՐ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ Նդէժ (Զ.1)	Էջ 2
Սագիմ Պատմութիւնը	Էջ 3
Երանիներու Շարունակութիւն	Էջ 4
Մանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒԻ ԳԻՐՔԷՆ

(25.9-26.7)

Այն օրը պիտի ըսեն. «Ահա ապրիկ մեր Տէր Աստուածը, որուն ապաւինած էինք: Անիկա փրկեց մեզ, որովհետեւ ի՛նքն է Տէրը որուն յուսացած էինք: Յնձանք եւ ուրախանանք մեր փրկութեան համար»: Որովհետեւ այս լերան վրայ Աստուած մեզ պիտի պաշտպանէ, իսկ Մովաբը պիտի կոխկռտէ այնպէս՝ ինչպէս յարդը կը կոխկռտեն կամնասայլով: Այո՛, Աստուած իր ձեռքը պիտի երկարէ եւ զայն խեղճացնէ ու կորուստի մատնէ, զայն վար բերելով այն բարձունքէն որուն կը ձգտէր ան: Աստուած պիտի փլցնէ քու բարձր եւ ամուր պարիսպներդ, ո՛վ Մովաբ, զանոնք գետնին հաւասարեցնելով: Այն օրը Հրէաստանի մէջ հետեւեալ երգը պիտի երգեն. «Զօրաւոր է մեր քաղաքը, որովհետեւ մեր Փրկիչը ի՛նքն է անոր պարիսպն ու պատուարը: Բացէ՛ք դռները, թող ներս գայ արդարութեան հետեւող եւ ճշմարտութիւնը պահող ժողովուրդը. այն ժողովուրդը, որ ճշմարտութիւնը կը պաշտպանէ եւ խաղաղութիւնը կը պահպանէ: Միշտ քեզի՛ յուսացինք, Տէ՛ր, ո՛վ Աստուած, մեժ եւ յաւիտենական. դուն, որ խոնարհեցուցիր եւ վար ձգեցիր երկինքի բնակիչ հրեշտակները, պիտի կործանես նաեւ մարդոց հզօր քաղաքները եւ զանոնք գետնին պիտի հաւասարեցնես:

Խոնարհներն ու հեզերը միայն պիտի բնակին այդ քաղաքներուն մէջ, եւ տնանկները պիտի երթան հոն հաստատուելու: Բարեպաշտներու ճամբան ուղիղ է, Աստուած հարթած եւ պատրաստած է անոնց ճամբան»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-11)

Պօղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի ծառաներս, կը գրենք ձեզի՝ Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուդ որ Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն ու սարկաւագներուն: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէրը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետարանչութեան գործին: Եւ վստահ եմ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, զայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին եւ ձեզ սիրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինձի վիճակուած շնորհքին, ըլլա՛յ բանտարկութեանս ընթացքին, ըլլա՛յ երբ ազատ վիճակով Աւետարանը

ձեր սէրը աւելի եւ աւելի անի սաստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել

կը պաշտպանէի ու կը հաստատէի: Միայն Աստուած գիտէ թէ ո՞րքան կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գորովովը:

Իմ աղօթքս է որ ձեր սէրը աւելի եւ աւելի անհի աստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ անբասիր, եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (9.44-50)

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լա՛ւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա. մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները, սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»: Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»:

«... ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏՔ Թ. ԿԻՐԱԿԻ (ԾԻԱՍԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ - ԹԻՒ 30)

Լ

«ԿԱՏԱՐԵԱԼ ԵՈՒԸ» (Ձ.1)

Յիսուսի այս կոչին մասին սկսայ մտածել, երբ բարեկամի մը հետ խօսակցութեան մը ընթացքին՝ իր մեկնաբանութեան տարակարծիք գտնուեցայ: Եւ փոխանակ տարակարծութիւնս օգին մէջ ձգելու՝ որոշեցի գրել շարքը, եւ Հին Կտակարանէն մեկնելով եկայ հասայ անձն մօտէն դիտելու կոչին բուն նշանակութիւնը:

Կոչը արձանագրուած է Լերան Քարոզի «Թշնամիները սիրել» հատուածին վերջաւորութեան: Յիսուս ըսած է. «Եթէ միայն ձեզ սիրողները սիրէք, Աստուծմէ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել: Մաքսաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» (Մտ 5.46-48):

Նախ եւ առաջ, նայինք թէ այս հատուածը ի՞նչ շրջագիծի մէջ է:

Ընդհանուր շրջագիծը Լերան Քարոզն է: Եթէ ուզենք Լերան Քարոզի պատգամը ամփոփել՝ ի՞նչ կ'ըսէ անիկա:

Լերան Քարոզ անուանուած բաժինը (Մտ 5-7 գլուխներ), Յիսուսի ուսուցումներուն manifest մըն է կարծէք:

Հաւանական է, որ տարբեր առիթներու մէջ Յիսուսի արտայայտած միտքերը դասաւորումի մը ենթարկուելով՝ Մատթէոս աւետարանիչին կողմէ իբր մէկ ամբողջութիւն տրուած են:

Թէ ինչո՞ւ: Գլխաւորաբար՝ որովհետեւ աւետարանիչը ուզած է Յիսուսը ներկայացնել իբր նոր Մովսէս մարգարէ:

Ծանօթ է, որ Մովսէս Աստուծոյ Օրէնքը ժողովուրդին բերաւ լեռնէն: Եւ այդ Օրէնքին պահպանութեամբ Ուխտ մը հաստատուեցաւ Աստուծոյ եւ «իր» ժողովուրդին միջեւ:

Մատթէոս աւետարանիչ Լերան Քարոզի սկզբնաւորութեան Յիսուսը կը նկարագրէ լերան մը վրայ: Կ'ըսէ թէ՛ Յիսուս բազմութիւնը տեսնելով լեռ ելաւ եւ սկսաւ սորվեցնել (5.1-2):

Աւետարանիչին համար Յիսուս նոր Մովսէսն է: Եւ այս տիպաբանական գաղափարը իր ամբողջ աւետարանին երկայնքին յստակօրէն կ'երեւայ: Ուրեմն, Լերան Քարոզը Մատթէոսի համար նոր Օրէնքն էր՝ Աստուծոյ նոր ժողովուրդին համար:

Թող ներուրի այստեղ հին Օրէնքին եւ նոր Օրէնքին միջեւ յստակացում մը կատարել՝ անցնելէ առաջ վերջինի բովանդակութեան բնորոշումին: Յիսուս հին Օրէնքին մասին հետեւեալը ըսած է. «Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներուն ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին եւայլ» (5.17-18): Յիսուս երբեք իր ուսուցումները չէր մտածած իբր հակադրութիւն Մովսէսի բերած Օրէնքին: Իր ուսուցումները հակադրութեան ախորժակին վրայ չէին կեցած, այլ ամբողջացման սկզբունքին: Բոլոր անոնք՝ որ Յիսուսի ըսածները մեկնաբանած են իբր հակաթեզ Մովսէսի ըսածներուն՝ ահաւոր կերպով ոչ թէ միայն նուազեցուցած են Յիսուսի մտքին խորութիւնը եւ հեռահասութիւնը, այլեւ գայն խեղճացուցած են ինքնահաւանութեան ախտին իջեցնելով գայն: Յիսուսի սկզբունքը՝ ամբողջացնելու կը ձգտէր:

Ի՞նչ էր այդ սկզբունքը:

Այս հարցումին պատասխանը՝ նաեւ բնորոշումն է Լերան Քարոզի բովանդակութեան:

Լերան Քարոզին մեկնակէտը «Երանի»ներու շարքն է. Յիսուս երանիներ տուած է «հոգիով աղքատ»ներուն, «սգաւոր»ներուն, «հեղ»երուն, արդարութեան քաղցն ու ծարաւը ունեցողներուն, ողորմածներուն, սիրտով մաքուրներուն, խաղաղարարներուն, արդարութեան նուիրեալներուն եւ բոլոր անոնց՝ որոնք իրեն կը հետեւին: Այս երանիներուն արժանի անձերը «երկրի աղը» եւ «աշխարհի լոյսն» են: Անոնց ճանապարհն է, որ Յիսուս գծած է Լերան Քարոզի մնացեալ բաժնով: Այդ ճանապարհին մէջ կը պահանջուի ըլլալ «աւելի հաւատարիմ» Աստուծոյ պատուիրաններուն՝ քան Փարիսեցիները եւ Օրէնքի ուսուցիչները: Բայց ինչպէ՞ս կարելի է «աւելի հաւատարիմ» ըլլալ:

Ըստ իս, աւելի հաւատարիմ ըլլալու սկզբունքը կը գտնուի Երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալու կոչի մէջ: Այդ կոչն իսկ է սիրտը Լերան Քարոզին: Նմանիլ Երկնաւոր Հօր:

Հոգի
ԳՔ

ՄԱԳԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ՝ Տօքթ. Հէրի Գլարք Նոյէս
Թարգմանութիւն՝ Կարօ Նոխուտեան

Գալ աշնան, երբ տեսնէ՛ք ձմեռան համար եռանկյունաշար երամով սագերուն հարաւ ուղեւորութիւնը, պահ մը նկատի առէ՛ք գիտութեան յայտնաբերած պատճառը այդ շարուածքին. երբ իւրաքանչիւր սագ կը թեւահարէ, զինք հետեւող սագը բարձրացնող օդային հոսանք մը կը ստեղծէ: Այսպէս եռանկյունաշար թռչելով՝ ամբողջ երամը նուազագոյնը 71% աւելի տարածութիւն կը կտրէ բաղդատած իւրաքանչիւրի առանձին կտրած տարածութեան:

Մարդիկ որոնք միեւնոյն ուղղութիւնը եւ համայնքի զգայարանքը կը բաժնեն՝ կրնան աւելի արագ եւ դիւրին հասնիլ իրենց նպատակակէտին՝ երբ զիրար բարձրացնող հոսանքով կը ճամբորդեն:

Երբ սագ մը շարքէն դուրս մնայ, շուտով կը զգայ ծանրութիւնն ու դիմադրականութիւնը առանձին թռչելուն եւ կը վերամիանայ երամին՝ օգտուելու համար զինք կանխող սագին ստեղծած բարձրացնող օդային հոսանքէն:

Եթէ սագին զգայարանքը ունինք, պիտի մնանք միացած անոնց հետ, որոնք մեր բռնած ուղղութեամբ կը ճամբորդեն:

Երբ առաջնորդ սագը յոգնի, իր տեղը կը գիշի ուրիշի մը որ առաջնորդի գործը կը ստանձնէ:

Խոհեմութիւն է կարգ առնել պահանջկոտ աշխատանքի ընթացքին՝ թէ՛ մարդոց եւ թէ՛ դէպի հարաւ ուղղուած սագերու պարագային:

Յետեւի սագերը նիչեր կ'արձակեն քաջալերելու առաջնորդները որ իրենց արագութիւնը պահեն:

Ի՞նչ կ'ըսենք մենք երբ մեր շարքին ետեւէն ճիչեր կ'արձակենք:

Վերջապէս եւ կարեւոր. երբ սագ մը հիւանդանայ կամ փամփուշտէ վիրաւորուի եւ շարքէն դուրս մնայ, երկու ուրիշ սագեր շարքէն կը բաժնուին ու կը հետեւին վիրաւորին՝ օգնութեան եւ պաշտպանութեան նպատակով: Անոնք կ'ընկերանան ինկած սագին մինչեւ որ ան իր թռչելու կարողութիւնը վերագտնէ կամ մեռնի: Միայն այն ատեն անոնք իրենց նամբան կը շարունակեն՝ առանձին կամ յաջորդ երամին հետ, հասնելու համար իրենց խումբին:

Եթէ սագի յատուկ զգայարանք ունինք, նոյնպէս իրարու նեցուկ պիտի կանգնինք:



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

Ե ԳԼՈՒԽ

«Երանի՜ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը» (5):

Երրորդ երանին հեզերուն կը վերաբերի: Որո՞նք են հեզերը: Բայց հարցումին պատասխանելէ առաջ, տեսնենք թէ ի՞նչ կը նշանակէ հեզ:

ԹԼ 12.1-5, 9-ի մէջ գրուած է հետեւեալը.-

Մարիամ եւ Ահարոն Մովսէսի դէմ խօսեցան՝ անոր առած եթովպացի կնոջ համար, քանզի անիկա եթովպացի կին առեր էր: Ու ըսին. «Միթէ Տէրը միայն Մովսէսի՞ն միջոցով խօսեցաւ: Զէ՞ որ մեր միջոցով ալ խօսեցաւ»: Տէրը լսեց: Մովսէս շատ հեզ մարդ մըն էր՝ երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի: Իսկոյն Տէրը ըսաւ Մովսէսին ու Ահարոնին ու Մարիամին. «Դուք երեքդ ալ վկայութեան խորանը ելէ՛ք»: Երեքն ալ ելան: Եւ Տէրը ամպին սիւնով իջաւ ու խորանին դուռը կեցաւ եւ Ահարոնն ու Մարիամը կանչեց: ...Եւ Տիրոջ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ:

Մարիամի եւ Ահարոնի չարախօսութեան դիմաց՝ Մովսէս չի հակաճառեր, այլ իրեն փոխարէն Աստուած է, որ կը պատասխանէ, որովհետեւ ան «երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի» հեզ մարդ մըն էր: Հեզին պաշտպանը Աստուած ինքն է:

Իսկ ո՞վ է հեզը:

Հեզութիւնը իրեն հոմանիշ ունի խոնարհութիւնը, բայց պզտիկ տարբերութիւն մը կայ երկուքին միջեւ: Հեզութիւնը այն յատկանիշն է, որ մարդը կրնայ ունենալ ծնունդէն. ան բնութեամբ կամ խառնուածքով հեզ կ'ըլլայ: «Հեզ»ին յունարէնը (փրաուս) նոր կտակարանին մէջ նաեւ «ազնիւ» թարգմանուած է: Հեզութիւնը, ուրեմն, նկարագրի ազնուութիւնն է:

Աւելցնեմ, որ հեզութիւնը մարդոց հետ յարաբերութեան վերաբերող նկարագրային յատկանիշ է աւելի, քան թէ Աստուծոյ հետ:

Խոնարհութիւնը թէեւ իմաստով մօտիկ է հեզութեան, բայց տարբեր է անկէ: Խոնարհութիւնը այն առաքինութիւնն է, որ մենք գիտակցաբար եւ կամաւորաբար ձեռք կը բերենք: Մենք խոնարհ չենք ծնիր, այլ խոնարհ կ'ըլլանք: Երբ կ'ըսեմ «կ'ըլլանք», ըսել կ'ըզգեմ, թէ մեր գիտակցութեամբ եւ ուզելով կը մերժենք չար տրամադրութիւններ ունենալ, մանաւանդ կը մերժենք հպարտութեան տրամադրութիւնը, եւ գիտակցաբար ու կամաւորաբար կը դառնանք խոնարհ:

Եւ խոնարհութիւնը աւելի Աստուծոյ հետ յարաբերութեան վերաբերող բարոյական յատկանիշ է, քան թէ մարդոց հետ:

Մարդուն առաջին մեծագոյն յանցանքը հպարտութիւնն է, աստուածանալու ցանկութիւնը, եւ այդ պատճառով՝ մահացու մեղքերուն գլխաւորն է անիկա. անկէ է, որ ծնունդ կ'առնեն բոլոր միւս մահացու մեղքերը: Եւ անոր դիմաց՝ առաքինութիւններուն մ ե ծ ա գ ո յ ն ը խոնարհութիւնն է:

Խոնարհութիւնը դարմանն է հպարտութեան: Միակ կերպը որով կարելի է մեր մէջ յաղթահարել «ես»ը՝ խոնարհութիւնն է, ինքզինք խոնարհեցնելու կամ խոնարհ

Մարդուն առաջին մեծագոյն յանցանքը հպարտութիւնն է, աստուածանալու ցանկութիւնը

պահելու ընթացքն է:

Նոնարհութեան ճամբան հեղութեան ճամբուն կը միանայ:

Հեզերը ոչ թէ միայն մարդոց հետ քաղցր են եւ բարի, հետեւաբար՝ ընդունելի անոնց կողմէ, այլ ամէն բանէ առաջ՝ իրենց նկարագրային այդ գիծով Աստուծոյ ընդունելի են: Մովսէսի օրինակը այդ ցոյց կու տայ: Երբ Աստուած կը վկայէ անոր հեղութեան մասին, բացայայտ կը դարձնէ, որ իրեն համար այդպիսի մարդ մը պէտք է: Բայց չի նշանակեր, թէ ով որ իր ծնունդով հեզ չէ՝ Աստուծոյ համար անընդունելի է: Այն մարդը որ հեզ չէ ծնած, սակայն գիտէ ապաշխարութեան ճամբով դարմանել իր սխալները, ան եւս կը մտնէ հեղութեան ճամբուն մէջ: Այնպէս ինչպէս որ մէկը կրնայ հարուստ ծնած չլլալ, բայց կրնայ հարստանալ. այնպէս ինչպէս որ մէկը կրնայ հոգիի հարստութիւն չունենալ, բայց կրնայ հասնիլ այն հարստութեան, նոյնպէս մէկը կրնայ հեզ չլլալ, բայց ինքզինք խոնարհեցնելով եւ խոնարհ պահելով կը հասնի հեղութեան ճամբուն, եւ կը ժառանգէ երկիրը:

Հեզերը պիտի ժառանգեն երկիրը, կ'ըսէ: Ի՞նչ երկրի մասին կը խօսի Յիսուս:

Տեսնենք 37-րդ Սաղմոսի 9, 11, 22, 29 եւ 34 համարները: Նախ յայտնեմ, որ այս գլուխը ընդհանրապէս բարեպաշտութիւն սորվեցնող Սաղմոս է: Յոյց կու տայ մարդոց չար եւ բարի վարմունքները եւ կը յորդորէ չարիքէն կամ չարերու տուած օրինակէն հեռու մնալ եւ հետեւիլ բարիներու օրինակին:

Նշեալ համարներուն մէջ կը կարդանք.

«Տիրոջ համբերողները երկիրը պիտի ժառանգեն», 9.

«Հեզերը պիտի ժառանգեն երկիրը», 11.

«Անոր օրհնածները պիտի ժառանգեն երկիրը», 22.

«Արդարները պիտի ժառանգեն երկիրը», 29.

«Տիրոջ համբերէ՛ ու անոր ճամբան պահէ՛ եւ Ան քեզ պիտի բարձրացնէ, որպէսզի երկիրը ժառանգես», 34:

Ո՞րմէկ երկիրն է ասիկա: Սաղմոսին ատեն եբրայեցի ժողովուրդը արդէն կ'ապրէր իրեն խոստացուած երկրին մէջ: Ուրեմն, ինչո՞ւ Դաւիթ «պիտի ժառանգեն» կ'ըսէր: Չէ՞ որ արդէն ժառանգեր էին երկիրը եւ կ'ապրէին

այնտեղ: Իրականին մէջ ակնարկուած երկիրը Տիրոջ Օծեալին բերելիք թագաւորութեան կը վերաբերի: Անիկա Նոր Երկիրը պիտի ըլլայ: Արդ, «երկիրը ժառանգել»ը կը նշանակէր Նոր Երկիրը ժառանգել:

Այդ երկրին ժառանգորդները պիտի ըլլան, կ'ըսէ սաղմոսերգուն, Տիրոջմով համբերողները, հեզերը, Անոր օրհնածները եւ արդարները:

Կը հաւատանք, որ Աստուած երկիրը ստեղծեց ոչ թէ որպէսզի անիկա ոչնչանայ, այլ որպէսզի մնայ: Բայց ինչպէ՞ս պիտի մնայ անիկա: Ի՞նչ պիտի ըլլայ երկրին վախճանական վիճակը:

Յայտնութեան գիրքի 21-րդ գլխուն մէջ կը կարդանք հետեւեալը, թէ հրեշտակ մը Քրիստոսի ծառայ Յովհաննէսը հոգիով կը վերացնէ եւ առնելով զայն բարձր ու հսկայ լեռան մը վրայ կը տանի, եւ ցոյց կու տայ սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը, որ երկինքէն, «Աստուծոյ մօտէն կ'իջնէր»:

Ո՞ւր է, որ կ'իջնէր սուրբ քաղաքը կամ երկնաւոր Երուսաղէմը, որ մէկ ուրիշ անունն է Երկինքի արքայութեան:

Անիկա կ'իջնէր մեր այս աշխարհին վրայ:

Ըսել ուզուածը այն է, թէ վախճանական ժամանակին երկիրը պիտի վերափոխուի կամ վերանորոգուի:

«Երանի անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագեանան» (6):

Ի՞նչ կը նշանակէ «արդարութեան քաղցն ու ծարաւը» ունենալ: Մարմնաւոր օրինակով՝ հոգեւոր բան մը կ'ըսուի: Հոգեւոր կարօտութեան փոխաբերութիւն մըն է անիկա: Աւելի ճշգրիտ բացատրութեամբ մը՝ հոգեւոր կարօտի մը փոխաբերութիւն մըն է ըսուածը: Այդ կարօտը արդարութեան կարօտն է: Իսկ ի՞նչ է արդարութիւնը: Ի՞նչ կը հասկնանք «արդարութիւն» ըսելով: Բայց նախքան այդ՝ ո՞վ է արդարը:

«Արդար» կը կոչենք այն մարդը, որ մեղքէ, անօրէնութենէ, չարիք գործելէ հեռու է: Ուրեմն, արդարը այն մարդն է, որ անմեղ է: Հետեւաբար արդարութիւնը անմեղութիւն է:

Ասկէ առաջ՝ Յիսուսի մկրտութեան դրուագին մէջ տեսանք, որ արդարութիւնը կապուած է Աստուծոյ ծրագրի իրագործման: Նաեւ Նոր Կտակարանէն գիտենք, որ Քրիստոս ինքն է

արդարութիւնը, որովհետեւ ինքն է Աստուծոյ ծրագրին ճշմարիտ իրականացումը:

Արդ, երբ կ'ըսուի՝ «Երանի անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին», ըսել կ'ուզուի՝ Երանի անոնց, որոնք Աստուծոյ փրկութեան, անոր ծրագրին իրագործման կը սպասեն, եւ իրենց անձով կը կապուին Յիսուսի, անոր մէջ տեսնելով այդ արդարութեան քաղցին ու ծարաւին յագեցումը:

Երանի անոնց, որոնք Աստուծոյ փրկութեան, անոր ծրագրին իրագործման կը սպասեն, եւ իրենց անձով կը կապուին Յիսուսի, անոր մէջ տեսնելով այդ արդարութեան քաղցին ու ծարաւին յագեցումը:

Այստեղ պէտք է աւելցնել, որ Յիսուսի մէջ արդարութեան քաղցին ու ծարաւին յագեցումը գտնելը մասնակի պիտի ըլլայ այս երկինքին ներքեւ

եւ այս երկրի վրայ, բայց անոր կատարումը պիտի գայ՝ երբ Նոր Երկինքն ու Նոր Երկիրը հաստատուին:

Քաղց եւ ծարաւ բառերը կը յիշեցնեն ծոմապահութիւնը:

Ինքզինք կամաւոր քաղցի ու ծարաւի ենթարկող մարդն է ծոմ պահողը:

Ի՞նչ է նպատակը ծոմապահութեան:

Աստուծոյ մերձենալ:

Եւ ծոմ պահողը ի՞նչ ձեւով կը մերձենայ Աստուծոյ: Մեղքերը աղօթականօրէն դարմանելով:

«Երանի ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ ողորմութիւն պիտի գտնեն» (7):

Որո՞նք են ողորմածները: Որո՞նց մասին կը խօսի Յիսուս:

Ի՞նչ կը հասկնանք, երբ ողորմութիւն կ'ըսենք:

Աստուած կ'ըսէ. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ գոհ» (Ով 6.6): Ի՞նչ ողորմութիւն է, որ Աստուած կը պահանջէ: Երբ Մատթէոս 6.1-4-ը կը կարդանք, կը տեսնենք որ ողորմութիւն բառը կը հասկցուի բարեգործութիւն իմաստով: Յիսուս երբ ողորմութիւն կ'ըսէ, կը հասկնայ բարեգործութիւն:

Նախքան ողորմութեան մասին իր ուսուցումը՝ Յիսուս կոչ ուղղած է երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալու (5.48): Թէեւ

Յիսուսի կոչը այլ ուսուցումի մը իբր եզրակացութիւն տրուած է, սակայն չ ա ն ջ ա տ ու ի ը ողորմութեան մասին անոր ուսուցումէն: Աստուածաշունչին մէջ բուն ողորմածը Աստուած Ինքն

Յիսուս երբ ողորմութիւն կ'ըսէ, կը հասկնայ բարեգործութիւն:

է: Հետեւաբար, այն մարդը որ Աստուծոյ նման ըլլալ կ'ուզէ, պէտք է ողորմած ըլլայ Անոր պէս: Մատթէոս աւետարանիչ իր 5-րդ գլխու վերջաւորութեան հրաւիրած է զինք լսողները կատարեալ սէր ունենալու եւ ըսած. «Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր զաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ» (45):

Կատարեալ սիրոյ հրաւերը՝ կարելի է հասկնալ նաեւ որպէս հրաւեր կատարեալ ողորմածութեան: Երանելի են անոնք՝ որոնք

Աստուծոյ պէս ողորմած են, այսինքն՝ մարդոց միջեւ խտրութիւն չեն դնելու եւ իրենց օգնութեան ձեռքը կ'երկարեն բոլորին: Անոնց համար է, որ Յիսուս կ'ըսէ՝ թէ ողորմութիւն պիտի գտնեն, եւ այդ ողորմութիւնը պիտի գայ ոչ թէ մարդոցմէ, այլ Աստուծոյմէ:

Աստուած իր ողորմութիւնը օրէ օր կը շնորհէ. մեր մեղքերը, մեր յանցանքները կը ներէ, որպէսզի մենք ալ մեր ողորմութեան մէջ առատանանք: Սակայն միշտ ի մտի պէտք է ունենալ, որ Աստուծոյ տալիք կատարեալ ողորմութիւնը պիտի պարգեւուի հանդերձեալին մէջ, երբ ամբողջապէս հոգիով պիտի ապրինք:

Աստուած իր ողորմութիւնը օրէ օր կը շնորհէ. մեր մեղքերը, մեր յանցանքները կը ներէ, որպէսզի մենք ալ մեր ողորմութեան մէջ առատանանք: Սակայն միշտ ի մտի պէտք է ունենալ, որ Աստուծոյ տալիք կատարեալ ողորմութիւնը պիտի պարգեւուի հանդերձեալին մէջ, երբ ամբողջապէս հոգիով պիտի ապրինք:

«Երանի՛ անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (8):

Նախ սկսինք վերջաւորութեանէն: ԶԱստուած տեսնել բացատրութիւնը ի՞նչ կը նշանակէ:

Հին Կտակարանին մէջ կը շեշտուի, թէ կարելի չէ զԱստուած տեսնել, ոչ թէ միայն նիւթական աչքով, այլ նոյնիսկ տեսիլքի մէջ:

Միակ պարագան, որ Աստուծոյ առաւել մօտիկ՝ դէմ յանդիմանական տեսողութիւնը ունեցած էր՝ Մովսէս մարգարէն էր անիկա: Մովսէս, ըստ Թուոց գիրքին, երբ Աստուծոյ հետ կը խօսէր՝ Անոր կերպարանքը կը տեսնէր (ԹԼ 12.8):

Ինչպէ՞ս կարելի է հասկնալ ասիկա:

Սաղմոս 24-ը ամբողջութեամբ փառաբանութիւն մըն է Աստուծոյ, բայց միաժամանակ Աստուծոյ սրբարանին մէջ կանգնելու մասին կը խօսի եւ անոր պայմանները կը նշէ: 6-րդ համարին մէջ սաղմոսերգուն արտայայտութիւն մը ունի, կ'ըսէ. «Երեսդ խնդրողը», այսինքն՝ ըսել կ'ուզէ ան՝ որ զԱստուած տեսնել կ'ուզէ եւ կը փնտռէ: Երեսը երբայերէնին մէջ կը նշանակէ նաեւ ներկայութիւն:

Պահ մը յիշենք Վկայութեան խորանը: Անիկա Աստուծոյ ներկայութեան խորհրդանշանն էր: Մարդիկ գայն տեսած էին միայն շինուած ատենը: Բայց երբ անիկա պաշտամունքին կեդրոնական վայրը կը դառնար, միայն քահանայապետը տարին անգամ մը այնտեղ մտնելու իրաւունքը կ'ունենար: Հոն կային միայն սրբազան առարկաներ եւ ընծաներ: Սակայն վայրը՝ Աստուծոյ ներկայութեան վայրն էր: Երբ քահանայապետը հոն կը մըտնէր՝ Աստուծոյ ներկայութեան կը կանգնէր: Հետեւաբար, սրբարանին մէջ Աստուծոյ երեսը տեսնելը՝ Աստուծոյ ներկայութեան կամ Անոր դէմ յանդիման կանգնիլ կը նշանակէր: Բայց ասիկա ըսել չէր, թէ կարելի էր մարդ էակին Աստուծոյ փառքը կամ էութիւնը տեսնել: Միայն մարգարէներուն Աստուած Ինքզինք տեսիլքի մէջ կը ճանչցնէր կամ երագի մէջ կը խօսէր (ԹԼ 12.6):

Բանանք Եսայի մարգարէի 6-րդ գլուխը: Այնտեղ կը կարդանք այն նշանաւոր տեսիլքը, որ մարգարէն ունեցած էր: Ան գրած է. «Տէրը տեսայ, որ բարձր ու վերացած աթոռի վրայ նստեր էր: Անոր քղանցքը տաճարը կը լեցնէր: Վերի կողմը սերովբէները կը կենային անոր առջեւ, որոնց ամէն մէկը վեց թեւ ունէր: Երկուքով երեսնին կը ծածկէին, երկուքով ոտքերնին կը ծածկէին ու երկուքով կը թռչէին: Եւ փոխնիփոխ կ'աղաղակէին ու կ'ըսէին.՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրքերու Տէրը» (Ես 6.1-3):

Հարցումը որ կ'ուզեմ դնել այստեղ սա

է. Ինչո՞ւ համար սերովբէները իրենց վեց թեւերէն երկուքով երեսնին կը ծածկէին: Որովհետեւ չէին կրնար Աստուծոյ փառքը դիտել: Արդ, եթէ սերովբէներն անգամ չեն կրնար Աստուծոյ փառքը դիտել, այլ խօսքով՝ չեն կրնար զԱստուած տեսնել, հապա ինչպէ՞ս պիտի կարենայ տեսնել մարդը: Այս բացատրութենէն ետք, ինչպէ՞ս հասկնալ Յիսուսի խօսքը, թէ անոնք որ սիրտով մաքուր են զԱստուած պիտի տեսնեն:

Իսկ Յիսուս Ի՞նչ ըսել կ'ուզէր, երբ կ'ըսէր թէ՛ սիրտով մաքուրները զԱստուած պիտի տեսնեն:

Աստուած Ինք Սուրբն է եւ զԱյն կարելի է ճանչնալ միայն սուրբ սրտով: Սրտով մաքուր եղողը Աստուծոյ նմանութիւնը կը բերէ իր մէջ կամ «կը տեսնէ» զԱյն: Բայց այս տեսնելը ամբողջակա՞ն տեսնելն է: Ոչ: Պօղոս առաքեալ հակառակ իր ունեցած բազմաթիւ տեսիլքներուն եւ փորձառութիւններուն, տեսէք թէ Ի՞նչ կ'ըսէ. «մենք այժմ զԱստուած կը տեսնենք ազօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ գայն պիտի տեսնենք

Սրտով մաքուր եղողը Աստուծոյ նմանութիւնը կը բերէ իր մէջ կամ «կը տեսնէ» զԱյն:

դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը ճանչնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի ճանչնամ ամբողջապէս, ճիշդ ինչպէս Ինք զիս կը ճանչնայ» (Ա Կր 13.12): Առաքեալին ակնարկած հայելին պղնձեայ կ'ըլլար եւ յստակ չէր ցոլացնէր իր մէջ ինկածը: Այս փոխաբերութեամբ ան ըսել կ'ուզէր, թէ Աստուծոյ մասին ճանաչումը կամ ներկայ ժամանակին մէջ զԱստուած տեսնելը միայն ազօտ կրնայ ըլլալ:

Անոնք որ սրտով մաքուր են, երբ կատարումը գայ Աստուծոյ հետ պիտի ըլլան, այնպիսի սերտութիւն մը, այնպիսի մտերմութիւն մը պիտի ունենան, որ զիրենք Աստուծմէ բաժնող պատուար պիտի չըլլայ, որովհետեւ մեղքերը պիտի չըլլան:

(Շարունակելի 15)

Յ Ո Ր Ե Լ Ե Ն Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ե Ր Գ



Ս. ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՃՈՂ ՅԻՍՏԱՎԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԿԾ

ՀԱՐԱԹ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008
ԵՐԵՎԱՆԻ ժԱՐ 7.30-ԻՆ

Ս. ՅԱԿՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ՄՐԱՀԻՆ ՄԷՋ

ՀՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՐ

ԳԱՆՏԱՅԻ ՀՂՈՅ ԹԵՄԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ՝

ԳԵՐԸ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐԵ. ՅԱԿՈՐԵԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՐ՝

Տ. ԵՒ ՏՐԿ. ԱՐԹՅՈ ՄԻ ՓԵՐՈՒԶ ՊՈՒՈՆԱԶԵԱՆԻ

ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՐ՝

Ս. ՅԱԿՈՐԻ ԿՐՏԱԵՐԱԵՐՈՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԻՆ՝

«ՆՈՐ ԾԱՊԻԿ»Ի՝

ԽԱՐԱՎԱՐ՝ ՏՐԿ. ԷԼՈ ՀԱՐՊՈՂԵԱՆ

ԵՒ

ԱՍՈՒՄԵՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՐ՝

Ս. ՅԱԿՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԷՆ՝

Ա.ԿԱՐԳԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ

ՂԵԿԱՎԱՐ՝

ՏՐԿ. ՎԱՐՊԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է